կացեալն ոչ ունիցի իշխանութիւն այլ իմն վրէժ-խնդրութեան բայց գանգատեսցի 'ի տունն դատաստանի և գտցի վճիռ արդարութեան։

ԳԼՈՒԽ ՅԿԳ.

Ով ոք բարկացեալ և անձամբ վրէժխնդրող յետ երիս անգամ հրաւիրելոյ բարկացանողին զի ելցէ ընդ դէմ իւր և տացէ անձամբ վրէժ բարկութեան սրտի իւրոյ, և ընդդիմանայ բարկացանողն երիցս անգամ խնայելով, և առաջի վկայից խոստանալով զի ամենայն պարտ մեղաց իւրոց հատուցանելու յօժար է, եթէ ելցէ հրաման դատաստանի և 'ի գանգատէ բարկացողի, յետ այսորիկ եթէ բարկացողն ամբարշտեալ ելցէ 'ի վերայ ընդդիմակացի իւրոյ, և 'ի պատճառէ բարկութեամբ արձակմանէ իւրոյ և ընդդիմակացն 'ի ջանացողութենէ փրկութեան անձին իւրոյ, գուցէ անկանիցի բարկացողն և մեռցի, և ընդդիմակացս վկայիւն հաստատեսցի առաջի ատենի դատաստանի, որ յինքն երիս անգամ հրաժարելով խոյս ետ ելանել ընդդէմ առն բարկացողի և խոստացաւ հատուցանել նմայ զամենայն պարտս մեղաց իւրոց, որ առ բարկացողն եթէ գտցի պարտաւոր առաջի ատենի դատաստանի, և բարկացողն ոչ լուաւ և յինքնակամ սրտիւ արձակեցաւ 'ի վերայ ընդդիմակացի և ընդդիմակացն ընդիմանալով փրկել զանձն իւր